

ԵՐԱՆՈՍ

Երանոսի գյուղապետարանում ամփոփում են 2011 թվականի կատարած աշխատանքները:

Համայնքի ղեկավարի կողմից 2011 թվականի ընթացքում հրավիրվել է ավագանու 16 նիստ, ընդունվել է ավագանու կողմից 29 որոշում:

2011թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ համայնքի բյուջեն կատարվել է 100.62 %-ով:

Սոցիալապես անապահով ընտանիքներին համայնքի բյուջեից տրամադրվել է 4 միլիոն դրամ դրամական օգնություն:

Պետական տոների և միջոցառումների անցկացման համար բյուջեից հատկացվել է 950000 դրամ:

բյուջեի միջոցների հաշվին կատարվել է 6 միլիոն դրամի չափով ձանապարհների փոսացման աշխատանքներ:

Գործող փողոցային լուսավորման ցանցի ընթացիկ նորոգման, պահպանման և սպասարկման համար բյուջեից հատկացվել է 150000 դրամ:

Կանոնավոր գործում է մսուր մանկապարտեզը, որտեղ հաճախում են 120 երեխա, մանկապարտեզի բնականոն գործունեությունը ապահովելու համար համայնքի բյուջեից հատկացվել է 10700000 դրամ:

2010 թվականից սկսվել է համայնքի բյուջեի միջոցների հաշվին մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները, 2011 թվականին համայնքի բյուջեից հատկացվել է 7308000 դրամ մանկապարտեզի ընթացիկ գործունեության համար, 9620000 դրամ հատկացվել է հիմնանորոգման աշխատանքների կատարման համար: Համայնքի բյուջեի միջոցներից բացի, մշակույթի տան հիմնանորոգման աշխատանքները ընդգրկված են պետական բյուջեի միջոցներով կատարվող աշխատանքների ցանկում, և կրելու է շարունակական բնույթ:

Ավարտական փուլում է գտնվում համայնքի պարզեցված գլխավոր հատակագծի նախագծումը, որի համար բյուջեից հատկացվել է 8700000 դրամ:

Համայնքի կողմից պատվիրվել է գյուղատնտեսական նշանակության հողամասերի ագրոքիմիական քարտեզը` 100000 դրամ գումարի չափով:

Համայնքի ղեկավարի կողմից տրամադրվել է 11 հատ ճարտարապետահատակագծային առաջադրանք, որից ` 9-ը տրամադրվել է անհատական բնակելի տների համար, 2-ը` համայնքային նշանակության օբյեկտները հիմնանորոգելու համար:

2010 թվականից համայնքում գործում է «Երանոս կոմունալ տնտեսություն և բարեկարգում», ՀՈԱԿ_ը որի կանոնադրական նպատակը աղբահանության և խմելու ջրագծի ընթացիկ նորոգման աշխատանքները ժամանակին և պատշաճ կարգով կատարելն է:

Համայնքի բյուջեի միջոցներից ՀՈԱԿ-ին տրամադրվել է 9600000 դրամ: ՀՈԱԿ-ի գործունեության շնորհիվ համայնքում կարգավորվել է աղբահեռացումը, ինչպես նաև խմելու ջրագծի ընթացիկ նորոգման աշխատանքները ժամանակին կատարելը: Համայնքի բյուջեի միջոցների հաշվին ձեռք է բերվել DT-75 տրակտոր 2200000 դրամ գումարով, որը ծառայելու է աղբավայրի սպասարկման և ձյան մաքրման աշխատանքները ժամանակին և բարձր մակարդակով կազմակերպելու և կատարելու համար:

Բյուջեի միջոցների հաշվին 2000000 դրամ գումարով կատարվել է խմելու ջրագծի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ, որը կրելու է պարբերաբար և շարունակական բնույթ համայնքի նոր թաղամասերում խմելու ջրագծի կառուցապատելու համար: